

**ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՎ ՅՐԵԱԱՐԱԲԱԿԱՆ  
ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ:  
ԵՐԱՅԵՐԵՆԻ ՂԵՐԸ ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՎ  
ՅՐԵԱԱՐԱԲԱԿԱՆ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

**Երուսաղեմի արաբական բարբառ**

Երուսաղեմի արաբական բարբառը բաժանվում է բնիկ մուսուլմանական և քրիստոնեական համայնքներում գործածվող Երուսաղեմի արաբական (Jerusalem Arabic Vernacular) և Երուսաղեմի հրեաարաբական (Jerusalem Judeo-Arabic Vernacular) խոսվածքների, որով խոսում է բնիկ հրեա համայնքը, որի մայրենի լեզուն տեղական արաբական բարբառն է<sup>1</sup>: Թե ինչպես տեղական արաբական բարբառը դարձավ գերիշխող հրեական համայնքում, կարելի է բացատրել հետևյալ կերպ. դեռևս VII դարում՝ արաբների նվաճումից հետո, Պաղեստինը դարձավ իսլամական հսկայական կայսրության մաս: Սկզբում այն Ղամասկոսի (Ներկայիս Սիրիա), ապա Բաղդադի (Ներկայիս Իրաք) կազմում էր: XII-XVI դարերի ընթացքում Պաղեստինը ղեկավարում էին Եգիպտոսի մուսուլման ղեկավարները: Թեպետ հետագայում նրանց ազդեցությունը թուլացավ, և Արևմտյան Եվրոպայից երկիր մուտք գործեցին խաչակիրները, իսկ 1516 թվականից մինչև առաջին համաշխարհային պատերազմը Պաղեստինը Թուրքական կայսրության կազմում էր, այնուամենայնիվ, արաբերենն ու արաբական մշակույթն իրենց ազդեցությունը թողեցին Պաղեստինի քաղաքակրթության ու մշակույթի վրա: Եվ կարելի է ասել, որ մինչ XX դարում եբրայերենի պաշտոնական լեզվի հռչակումը, Պաղեստինում մեծ դեր ունեին արաբերենն ու նրա բարբառները: Միևնույն ժամանակ արաբների ու հրեաների հարաբերությունները մինչև XX դարի քսանական թվականները գնալով բարելավվում էին: Նրանց կապը XIX-XX դարերում ավելի սերտացավ Երուսաղեմի Զին քաղաքում՝ հատկապես առևտրի ոլորտում: Ամենօրյա հաղորդակցության արդյունքում հրեաները սկսեցին խոսել տեղական արաբական բարբառով՝ յուրացնելով նրանց սովորույթներն ու ավանդույթները՝ բացառությամբ կրոնի:

Երկու համայնքների հաղորդակցության այս շրջանը իշխում էր Երուսաղեմի Զին քաղաքում նախքան քաղաքի խիտ բնակեցումը և արվարձաններում հրեաների տարածումը, որն արագ ընթացք ստացավ հրեական զանգվածային ներգաղթից հետո:

<sup>1</sup> Piamenta Moshe, Jewish life in Arabic Language and Jerusalem Arabic in communal perspective. A Lexical-semantic study, Leiden; Boston, 2000, p. 2

Երուսաղեմի արաբ բնակչությունը, բացի բնիկ երուսաղեմաբնակներից, ներառում է մուսուլման բնակիչներ, որոնք խոսում են արաբական քաղաքային և գյուղական այլ բարբառներով: Նրանց և Երուսաղեմի արաբների միջև գործում էր հարաբերական հարմարվողականության գործոնը<sup>2</sup>: Ինչ վերաբերում է Երուսաղեմում բնակվող քրիստոնյաներին՝ հայերին, ասորիներին, հույներին, որոնց մայրենի լեզուն լիովին տարբերվում է արաբերենից, մասամբ կամ ամբողջովին տիրապետում են Երուսաղեմի արաբական խոսվածքին: Բացի այդ, Երուսաղեմի քրիստոնյա բնակիչների ամուսնությունները տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ խթան էին հանդիսանում Երուսաղեմի արաբական (այսուհետ ԵԱ) խոսվածքի տարածման ու զարգացման համար: Մյուս կողմից, Երուսաղեմի հրեաարաբական (այսուհետ ԵՀԱ) խոսվածքի զարգացմանը նպաստում էին Երուսաղեմի հրեաների ամուսնություններն այն հրեաների հետ, որոնք գաղթել էին արաբախոս երկրներից, որտեղ նրանք հաղորդակցվել էին իրենց հատուկ հրեաարաբական խոսվածքներով: Ամուսնությունները տեղի էին ունենում նաև հրեաների հետ, որոնք ծագումով Իսպանիայից էին և ապրում էին Սիջերկրական երկրներում, կամ ծագումով Արևելյան Եվրոպայի երկրներից էին, որտեղ իդիշը<sup>3</sup> նրանց մայրենի լեզուն էր:

Այսպիսով, վերջին մի քանի դարերի ընթացքում հրեա ներգաղթածների համար ամուսնություններն Երուսաղեմի բնակիչների հետ միակ ուղին չէր՝ յուրացնելու Երուսաղեմի հրեաարաբական և արաբական խոսվածքները: Նրանց ամենօրյա հաղորդակցությունը Երուսաղեմի արաբական բարբառով խոսողների հետ նպաստեց լեզվին տիրապետելուն, ինչը կարելի է ասել նաև քրիստոնյաների մասին, որոնց լեզուն տարբերվում է արաբերենից:

Երուսաղեմի հրեաարաբական և արաբական խոսվածքների գլխավոր տարբերությունը ԵՀԱ խոսվածքում հրեական տարրի առկայությունն է՝ արտահայտված Սասորայի՝ ավանդական աստվածաշնչյան, Սիշնայի կամ Ռաբբինական եբրայերենի՝ բառերում ու արտահայտություններում՝ շեշտը

<sup>2</sup> Piamenta Moshe, Jewish life in Arabic Language and Jerusalem Arabic in communal perspective. A Lexical-semantic study, Leiden, Boston, 2000, p. 3

<sup>3</sup> Բառացի հրեերեն, որն առաջացել է միջնադարյան գերմաներենի բարբառներից մեկի հիման վրա և ժամանակի ընթացքում վերածվել ինքնուրույն հրեական լեզվի: Այն որպես խոսակցական և գրական լեզու օգտագործվում է մինչև այսօր, հիմնականում ԱՄՆ-ի, Եվրոպայի և Իսրայելի ուղղափառ համայնքներում:

<sup>4</sup> Եբրայերեն լեզվի պատմությունը բաժանվում է մի քանի փուլերի՝ աստվածաշնչյան, հետ աստվածաշնչյան, միջնադարյան և արդի: Միջնադարյան կամ Ռաբբինական եբրայերենը այլ կերպ կոչվում է հետաստվածաշնչյան եբրայերեն:

դնելով հրեական կրոնի վրա<sup>5</sup>: Այս բառերն ու արտահայտությունները, փոխանցվելով սերնդեսերունդ, մասամբ ենթարկվում էին իմաստային փոփոխության:

Համաձայն եՅԱ խոսվածքով խոսող մարդկանց տեսակետի՝ հրեական տարրերը, որոնք առկա են եՅԱ խոսվածքում, ավելի հասկանալի են, քան մյուս տարրերը, որոնք համարվում են փոխառություններ: Դրան հակառակ, նրանց համար հրեական տարրը իրենց եՅԱ խոսվածքի հենքն է հանդիսանում, որը հիմնված է խոսակցական արաբերենի վրա: Այն տարածվեց 637 թվականից հետո, երբ Օմար խալիֆը նվաճեց Երուսաղեմը, և մուսուլմանները սկսեցին լայնորեն տարածել իսլամը: Ավելին, այս հենքը հրեական համընդհանուր ենթաշերտ է, որը տարանջատիչ տարր է հանդիսանում հրեական բոլոր խոսակցական լեզուների համար, ավելի ճշգրիտ, հրեաարաբերենի, հրեապարսկերենի, իդիշի և լադինոյի<sup>6</sup> համար: Այն լեզվաբանական միավորիչ գործոն է, որը հիմնվում է հետևյալ դրույթների վրա: Այն է՝ հոգևոր կյանքը հուդայականության մեջ, երկու հազարամյակ շարունակ սիոնիզմի ձգտումը, Իսրայելում նորից միավորվելու երազանքը: Եբրայական այս հենքն առկա է նաև տարբեր ազգերի լեզուներում, որոնց հետ հրեաներն ապրել են և որոնց հետ հաղորդակցվել են երկու հազարամյակ՝ մինչև Իսրայել պետության ստեղծումը և եբրայերենի պաշտոնական լեզու հռչակվելը:

Կարելի է ասել, որ եՅԱ և ԵԱ խոսվածքների հակասական վերլուծությունը բառագիտական մակարդակում ավելի է պարզ դարձնում նրանց տարբերությունը. եՅԱ խոսվածքում ընդգրկվում են եբրայական տարրեր, որոնք ամբողջովին բացակայում են ԵԱ խոսվածքում: Անգամ եթե դրանք գոյություն ունեն, ապա նրանք անկասկած ունեն իրենց համարժեքը ԵԱ խոսվածքի իմաստային դաշտում՝ ներառելով լրացուցիչ իմաստ, որոնք ամբողջովին կամ մասամբ չեն թարգմանվում, երբ եՅԱ խոսվածքով խոսողը հաղորդակցվում է ԵԱ խոսվածքով խոսողի հետ:

ԵԱ խոսվածքի փոխակերպումը Երուսաղեմի ստանդարտ արաբերենի և եՅԱ խոսվածքի փոխակերպումը Երուսաղեմի ենթաստանդարտ արաբերենի

Բրիտանական մանդատի տարիներին ԵԱ խոսվածքը փոխակերպվեց Երուսաղեմի ստանդարտ արաբերենի (Jerusalem standard arabic): Փոխակերպման այս գործընթացը բնորոշ է ընդհանուր պանարաբական գաղափարին: Այն

<sup>5</sup> Piamenta Moshe, Jewish life in Arabic Language and Jerusalem Arabic in communal perspective. A Lexical-semantic study, Leiden; Boston, 2000, p. 4

<sup>6</sup> Միջնադարյան իսպաներենի բարբառներից մեկի հիման վրա առաջացած լեզու, որը պահպանվել է մինչև այսօր: Այն իին հրեականություն կան բարբառի շարունակությունն է եւ անվանվել է նաև ջուդեզմո, ջուդեկկե, սպանոլ:

առաջնորդվում է շովինիզմի մշակութային գործոններով և բարձրացնում է կենսական ու կրթական չափանիշները: Համախմբվելով՝ Պաղեստինի արաբները հիմք են դնում Պաղեստինյան արաբական շարժմանը և նրա քաղաքական հաստատություններին: Շարժման ստեղծման հիմնական նպատակն էր հանուն ազատության պայքարել գաղութացման և սիոնիստական շարժման դեմ:

Ինչպես հայտնի է, արաբները դարեր շարունակ պայքարում էին արաբական աշխարհում միավորվելու համար: Նրանց համար կարևոր էր նաև հասնել արաբական քաղաքային բարբառների միավորմանը, որին միաժամանակ պետք է հետևեր գյուղական բարբառների միաձուլումը նրանց հետ<sup>7</sup>: Բնակչության կրթական մակարդակի բարձրացմանը զուգընթաց բարբառների միջև բանավոր հաղորդակցությունը ավելի սերտ էր դառնում: Այս ամենը հանգեցրեց արաբական քաղաքային և գյուղական բարբառների մերձեցմանն ու դյուրըմբռնմանը:

Ինչ վերաբերում է ԵԱ խոսվածքին, կարելի է ասել, որ լեզվաբանական ակնհայտ փոփոխություններ տեղի ունեցան. արևելյան (թուրք-պարսկական) և արևմտյան (եվրոպական) փոխառությունները աստիճանաբար ներթափանցեցին ԵԱ խոսվածք, որտեղ նրանք փոխարինվեցին բառացի թարգմանություններով<sup>8</sup>, աղավաղելով ԵԱ խոսվածքը:

Այս ամենից ակնհայտ դարձավ, որ արդեն Երուսաղեմի ստանդարտ արաբերենի փոխակերպված խոսվածքը, որ բանավոր արաբերենի բնույթ ունի, խառնվել է բարբառային ավանդական տարրերի հետ: Միաժամանակ փորձարկելով միանման լեզվաբանական գործընթացներ՝ Երուսաղեմի ստանդարտ արաբերենը ձգտում էր ժամանակակից արաբական աշխարհում համապատասխանել իրականության պահանջներին:

Այսպիսով, ԵԱ խոսվածքի փոխակերպումը Երուսաղեմի ստանդարտ արաբերենի մի ուղղություն էր, որը լայնորեն կիրառվում էր ժամանակակից արաբական բարբառներին զուգահեռ:

Արևմուտքի ազդեցությունն ու մոդեռնիզմը ԵՀԱ և ԵԱ խոսվածքների միջև անհամաձայնությունների պատճառ դարձան, որին հետևեց նրանց պառակտումը:

ԵՀԱ խոսվածքով խոսողները իրենց խոսվածքում պահպանեցին հին ԵԱ խոսվածքի տարրեր, սակայն չէին ձգտում զարգացնել այն արաբական գրական, մշակութային և ազգային ուղղություններով: Մինչիսլամական ժամանակաշրջանից ի վեր նրանք բոլոր հրեաների նման իրենց արաբական խոս-

<sup>7</sup> Piamenta Moshe, Jewish life in Arabic Language and Jerusalem Arabic in communal perspective. A Lexical-semantic study, Leiden; Boston, 2000, p. 5

<sup>8</sup> calque - բառապատճեն

վածքը պետք է գրեին եբրայական տառերով՝ գործածելով լայն տարածված սեֆարդների գիրը և միացնելով արաբերենը Մասորայի եբրայերենին և օտար փոխառություններին:

Օսմանյան իշխանության վերջին տարիներին ժամանակակից եբրայերենի ազդեցության տակ ԵՅԱ խոսվածքը սկսեց առանձնանալ ԵԱ խոսվածքից (թեպետ Երուսաղեմի արաբական բարբառը երբեք միատարր և միասնական չի եղել): Այն առանձնացավ որպես ազգային գրական և զարգացող խոսակցական լեզու:

Մինչ այդ ԵՅԱ խոսվածքը վերածվեց Երուսաղեմի ենթաստանդարտ արաբերենի (Jerusalem sub-standard arabic): Փոխակերպման հիմնական պատճառ էր հանդիսանում եվրոպական փոխառությունների, նորաբանությունների, ինչպես նաև ժամանակակից եբրայերենի բառացի թարգմանությունների ներթափանցումը ԵՅԱ խոսվածքի մեջ:

Ավագ սերունդը, որ սահուն խոսում էր ԵՅԱ խոսվածքով, չէր կարողանում համակերպվել լեզվի փոխակերպման այս գաղափարի հետ:

Այսպիսով, ԵՅԱ խոսվածքը փոխակերպվեց Երուսաղեմի ստանդարտ արաբերենի՝ արտացոլված ժամանակակից եբրայերենով: XX դարի կեսին (1948 թ.), երբ արյան գնով ստեղծվեց Իսրայել պետությունը, երիտասարդ սերունդը, ընդունելով Երուսաղեմի ենթաստանդարտ արաբերենը, նպաստեց նրա զարգացմանն ու տարածմանը<sup>9</sup>:

Եբրայերենը որպես Իսրայելի պաշտոնական լեզու և նրա ազդեցությունը ԵՅԱ խոսվածքի վրա

XX դարի սկզբին Բալֆուրի հռչակագիրը<sup>10</sup>, առաջին համաշխարհային պատերազմում Բրիտանիայի հաղթանակը, Պաղեստինում հրեաների նկատմամբ արաբների հանդուրժողական վերաբերմունքը պատեհ առիթ հանդիսացան մեծ թվով հրեաների Պաղեստին ներգաղթելու համար<sup>11</sup>: Ներգաղթի հոսքը հիմնականում Արևելյան Եվրոպայից էր: XX դարի սկզբին Պաղեստինում բնակվող հրեաների թիվը կազմում էր ողջ բնակչության ութ, իսկ արաբներինը՝ իննսուներկու տոկոսը, որոնց մեծ մասը մահմեդականներ էին:

1933-35 թթ. գերմանացիների դաժան գործողությունների հետևանքով Պաղեստին ներգաղթեցին նաև մոտ քսան հազար հրեաներ: Եվ հրեաների

<sup>9</sup> Piamenta Moshe, Jewish life in Arabic Language and Jerusalem Arabic in communal perspective. A Lexical-semantic study, Leiden; Boston, 2000, p. 67

<sup>10</sup> Բալֆուրի հռչակագրով նախատեսվում էր Պաղեստինում հրեա ժողովրդի համար ստեղծել «ազգային տուն» եւ պաշտպանել Պաղեստինի ոչ հրեական համայնքների քաղաքական ու կրոնական կամ այլ երկրներում բնակվող հրեաների իրավունքները եւ նրանց քաղաքական կարգավիճակը:

<sup>11</sup> Драчинский Марк, Становление иврита, [www.sem.40.ru/edu/articall.shtml](http://www.sem.40.ru/edu/articall.shtml), 2008, стр. 2

թիվը կազմեց ողջ բնակչության երեսուն տոկոսը: Այս տարիներին արաբներգաղթածների թիվը ևս շարունակում էր աճել արագ տեմպերով: Նրանք հիմնականում գաղթում էին Զորանից<sup>12</sup>:

Հրեաների հանդեպ արաբների հանդուրժող վերաբերմունքը կարելի է բացատրել նրանով, որ արաբները չունեին սիոնիզմին հակադրելու համարժեք գաղափարախոսություն, և դրա հետ մեկտեղ արաբ առաջնորդների միջև գոյություն ունեցող հակասությունները խոչընդոտում էին միասնական և արդյունավետ քաղաքականության իրականացմանը: Նրանք կարծում էին նաև, որ հրեական բնակավայրերը ոչ մի կերպ չեն սահմանափակի արաբների քաղաքական և տնտեսական ազատությունը:

Ու քանի որ բրիտանական մանդատը հրեա ներգաղթածների նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ուներ, հրեաներին հաջողվեց դառնալ երկրի լավագույն հողատարածքների տերը: 1920-35 թթ. ընթացքում երեսուն հազար արաբ գյուղական ընտանիքներ զրկվեցին իրենց հողերից: Հրեաներն իրենց դիրքերն ամրապնդեցին նաև արդյունաբերության բնագավառում:

Այս ամենի արդյունքում սկսվեցին դժգոհություններ, որոնք գնալով ավելի էին սաստկանում: 1936 թվականին արաբները գործադուլ հայտարարեցին, որը տևեց վեց ամիս: Գործադուլը դադարեցվեց արաբ ղեկավարների ճնշման արդյունքում:

Արդեն 1939 թվականին Պաղեստինում հրեաների թիվը կազմում էր 445 000, իսկ արաբներինը՝ 985 000:

1939 թվականին Լոնդոնում գումարված համաժողովում արաբները պահանջում էին ստեղծել անկախ արաբական Պաղեստին, որտեղ կապահովվեին հրեա փոքրամասնությունների բոլոր իրավունքները: Սակայն հրեա պատվիրակները հենց սկզբից բացառեցին այնպիսի հանգուցալուծում, որը կնվազեցներ հրեական պետության ստեղծման հնարավորությունը: Այդպես էլ համաձայնության չգալով՝ բրիտանական կառավարությունը ներկայացրեց խնդրի լուծման իր տարբերակը, որը հայտնի է «Սպիտակ թուղթ» անվանմամբ: Համաձայն դրա՝ Բրիտանիան առաջարկում էր Պաղեստինի կառավարության կազմում ընդգրկել և՛ հրեաների, և՛ արաբների, հավասարապես պաշտպանել բոլորի իրավունքները, իսկ ներգաղթի հետ կապված հարցերը պետք է լուծվեին արաբների համաձայնությամբ: Այս ամենի հետևանքով հրեաները բողոքի ալիք բարձրացրին և սկսեցին պատրաստվել Բրիտանիայի դեմ պատերազմի: 1945 թվականի նոյեմբերի մեկին սկսվեց անգլո-հրեական պատերազմը, որը տևեց երկու տարի:

<sup>12</sup> Parkes James, A history of Palestine from 135 A.D. to modern time, London, 1949, p. 320

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Բրիտանիայի ուշադրությունը կենտրոնացավ եվրոպական ճակատի վրա: Նա, այդպես էլ չկարողանալով լուծել հրեաների ու արաբների ծայրահեղ լարվածության լատենտ հարաբերությունները, 1947 թվականին Պաղեստինի լուծման հարցը հանձնեց ՄԱԿ –ին: 1947 թվականի նոյեմբերի քսանիննին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի որոշմամբ (երեսուներեք կողմ և տասներեք դեմ ձայներով) Պաղեստինը բաժանվեց երկու մասի՝ հրեական և արաբական<sup>13</sup>: Զվեարկությունից հետո Արաբական լիգայի նախագահը նախազգուշացրեց. «Բաժանման գիծը Պաղեստինում դառնալու է կրակի և արյան գիծ»<sup>14</sup>: Եվ իսկապես, կարճ ժամանակ անց սկսվեց արաբաիսրայելական պատերազմը, որը շարունակվում է մինչև օրս:

1948 թվականի մայիսի տասնչորսին սիոնիստական ղեկավարները Թել-Ավիվում հայտարարեցին Իսրայել պետության ստեղծման մասին: Երկրի գլուխ կանգնեց աշխատավորական (Մապալ) կուսակցության առաջնորդ Բեն Գուրիոնը:

Իսրայել պետության ստեղծման համար հիմնական պատճառ էր հանդիսանում նաև վեց միլիոն հրեաների ջարդը<sup>15</sup>: Եվ կարելի է ասել, որ Իսրայելի ստեղծումը հրեաների տառապանքների արդյունքն էր:

Այսպիսով, Իսրայել պետության ստեղծումից հետո հրեա ներգաղթածների համախմբումը Իսրայելում և եբրայերենի վերածնունդը որպես խոսակցական լեզու, հանգեցրին հրեաների՝ իրենց հայրենիքում միավորվելուն՝ որպես վերածնված ազգ:

Սիոնիստական շարժման առաջնային նպատակն էր համախմբել հրեաներին Իսրայելում, այնուհետև ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտային տարագրության մեջ ապրող բոլոր հրեաներին բնակություն հաստատել հրեական պետությունում<sup>16</sup>: Սիննույն ժամանակ անհրաժեշտ էր ստեղծել մի լեզու, որը կառնչվեր ժամանակակից մարդաբանական, գիտական և տեխնոլոգիական տերմինների հետ, որին կհաջորդեին եվրոպական լեզուներից ճշգրիտ, լայնածավալ թարգմանությունները: Եվ ըստ սիոնիստների՝ եբրայերենը միակ լեզուն էր, որ կարող էր դառնալ հրեաների ազգային լեզուն: Շարժման նպատակն էր նաև ազգային, կրոնական, մշակութային, տնտեսական հաստատությունների ստեղծումը, որն իրականացավ երկու հազարամյակ հետո, երբ ստեղծվեց Իսրայել պետությունը: Սիոնիս-

<sup>13</sup> Parkes James, A history of Palestine from 135 A.D. to modern time, London, 1949, p. 359

<sup>14</sup> Bregman A., Jihan El-Tahri, The fifty years war: Israel and the arabs. BBC Books, London, 1998, p. 26

<sup>15</sup> Johnson Paul, A history of the jews, London, 1995, p. 519

<sup>16</sup> История Сионистского движения, 2008, [www.jewish.ru/topicews](http://www.jewish.ru/topicews). стр. 3, 12/03/2008

տական շարժման կողմնակիցները ոչ միայն չէին մերժում հրեաների առաքելության գաղափարները, այլև նրանք համոզված էին, որ աշխարհը իրենցից դեռ շատ նոր բաներ կսովորի, որի համար անհրաժեշտ էր ստեղծել հրեական պետություն<sup>17</sup>:

1948 թվականին Իսրայել պետության ստեղծումից հետո եբրայերենը դարձավ երկրի գլխավոր լեզուն՝ զարգացնելով իր առանձնահատկություններն անսովոր կենսունակությամբ<sup>18</sup>: Այն, որպես խոսակցական և կրթության պաշտոնական լեզու, ներկայացվեց ոչ միայն դպրոցներում, այլև ողջ երկրում: Եբրայերենով խոսողների թիվը սկսեց արագորեն աճել, և միևնույն ժամանակ տարբեր մշակութային հաստատություններ (այդ թվում Երուսաղեմի եբրայական համալսարանը), օգնեցին ընդլայնել լեզվի տեխնիկական բառապաշարը<sup>19</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ մինչև 1948 թվականին Իսրայել պետության ստեղծումը, եբրայերենով խոսողների թիվը ավելացավ յոթ անգամ՝ 50 000 -ից դարձավ մոտավորապես 350 000<sup>20</sup>: Լեզվի հանդեպ հետաքրքրությունը մեծ էր գլխավորապես երիտասարդների մոտ, որոնց թվում էին նաև ԵՅԱ խոսվածքով խոսող մարդիկ: Նրանց համար եբրայերենը հանդես էր գալիս որպես գործածական (երկրորդ) լեզու հրեաների հետ հաղորդակցվելիս:

1948 թվականին՝ եբրայերենի պաշտոնական լեզու հռչակվելուց հետո, Պաղեստինի որոշ համայնքներում տեղի ունեցան զգալի փոփոխություններ:

XX դարում Պաղեստինում սեֆարդները<sup>21</sup> ու աշքենազները<sup>22</sup> մեծ համայնք ունեին, և նրանց խոսակցական լեզուն լադինոն էր: Սակայն պաշտոնական լեզու հռչակվելուց հետո եբրայերենը դարձավ աշքենազների ու սեֆարդների խոսակցական լեզուն՝ չնայած նրանց տարբեր առողջանությունների առկայությանը<sup>23</sup>: Իսկ ԵՅԱ խոսվածքով խոսող մարդկանց և նրանց համար, ովքեր սկսեցին գիտակցել իրենց նոր ազգային ինքնությունը, եբրայերենը դարձավ զարգացող խոսակցական լեզու և աստիճանաբար առանձ-

<sup>17</sup> История Сионистского движения, 2008, [www.jewish.ru/topjews](http://www.jewish.ru/topjews), стр. 2, 12/03/2008

<sup>18</sup> Hoffman J., In the beginning: A short history of the Hebrew Language, New York-London, 2004, p. 272

<sup>19</sup> Hoffman J., In the beginning: A short history of the Hebrew Language, New York-London, 2004, p. 271

<sup>20</sup> Badillos S., A history of the Hebrew Language, translated by John Elwolde, Cambridge University Press, 1993, p. 192

<sup>21</sup> Մֆարդի կամ սեֆարդի (խապանացի), այսպես են անվանում խապանացի հրեաներին:

<sup>22</sup> Աշքենազ (գերմանացի), այսպես են անվանում գերմանացի հրեաներին:

<sup>23</sup> Piamenta Moshe, Jewish life in Arabic Language and Jerusalem Arabic in communal perspective. A Lexical-semantic study, Leiden, Boston., 2000, p. 6

նացրեց նրանց եւ խոսվածքով խոսող մարդկանցից՝ պահպանելով Պաղեստինի արաբների ինքնությունը<sup>24</sup>:

Եբրայերենի արտասանությանը հարմարեցված եվրոպական փոխառություններից բացի, ԵՅԱ խոսվածքում առկա են նաև ժամանակակից եբրայերենի փոխառություններ և արևմտյան ու արևելյան լեզուներից թարգմանություններ, որոնք աստիճանաբար թուլացրին ԵՅԱ խոսվածքի արաբական տարրերը: Սրան զուգահեռ ԵՅԱ խոսվածքում ուժեղացավ եբրայերենի ազդեցությունը:

XX դարի երեսնական թվականների կեսերին ԵՅԱ խոսվածքը փոխարինվեց եբրայերենով հետևյալ քայլերով՝

1. ԵՅԱ խոսվածքը հարստացավ եբրայերենի տարրերով
2. ի հակադրություն դրան՝ եբրայերենը, դառնալով գերիշխող, իր ազդեցությունը տարածեց ԵՅԱ խոսվածքի վրա
3. եբրայերենի և ԵՅԱ խոսվածքի մասնակի միաձուլում
4. ակտիվ երկլեզվություն
5. երիտասարդ սերնդի պասիվ երկլեզվություն
6. երիտասարդ սերնդի ԵՅԱ խոսվածքի թուլացումը եբրայերենի ներթափանցման հետևանքով
7. ԵՅԱ խոսվածքի թուլացումը քաղաքական ծայրահեղ անհամաձայնությունից և արաբական ու հրեական մրցակից համայնքների միջև աճող թշնամությունից ԵՅԱ խոսվածքի թուլացումը և փոխարինումը եբրայերենով, այդպիսով ձևավորեց լեզվաբանական տարանջատում երկու համայնքների միջև<sup>25</sup>:

<sup>24</sup> Piamenta Moshe, Jewish life in Arabic Language and Jerusalem Arabic in communal perspective. A Lexical-semantic study, Leiden; Boston, 2000, p. 7

<sup>25</sup> Piamenta Moshe, Note on the Decay of Jerusalem judaeo-arabic under the impact of sociopolitical transformation, in Asian and African Studies, the Gustav Heinemann institute of M. E. S., Haifa, 1992, p. 84